

**«Սենքի տեղային տաքացուցիչների էներգապիտակավորման մասին»
Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 թվականի ապրիլի 24-ի 2015/1186**

ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ(ԵՄ)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,
հաշվի առնելով «Էներգիա սպառող արտադրանքի կողմից էներգիայի և այլ
ռեսուրսների սպառման վերաբերյալ՝ պիտակավորման և արտադրանքի
ստանդարտ տեխնիկական բնութագրի ներկայացման միջոցով նշում կատարելու
մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի
2010/30/ԵՄ հրահանգը¹ և մասնավորապես՝ դրա 10-րդ հոդվածը,

քանի որ՝

- 1) 2010/30/ԵՄ հրահանգով պահանջվում է, որ Հանձնաժողովն ընդունի
պատվիրակված ակտեր էներգասպառող այն արտադրանքի
պիտակավորման վերաբերյալ, որն ունի էներգախնայողության զգալի
ներուժ և, ունենալով համարժեք ֆունկցիոնալություն, արդյունավետության
մակարդակներում ցուցաբերում է զգալի տարբերություններ.
- 2) համարժեք ֆունկցիոնալությամբ սենքի տեղային տաքացուցիչները
էներգաարդյունավետության առումով ցուցաբերում են զգալի
տարբերություններ, և դրանց կողմից օգտագործված էներգիան կազմում է
Միության էներգիայի ընդհանուր պահանջարկի զգալի մասը: Դրանց
էներգասպառումը նվազեցնելու հնարավորությունները զգալի են.

¹ ՊՏ L 153, 18.6.2010թ. էջ 1:

- 3) ոչ փայտային կենսազանգվածով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչները հատուկ տեխնիկական բնութագրեր ունեն, եւ այդ պատճառով սույն կանոնակարգի գործողությունը դրանց վրա չի տարածվում.
- 4) պետք է սահմանվեն պիտակավորման եւ արտադրանքի վերաբերյալ ստանդարտ տեխնիկական բնութագրերի մասին ներդաշնակեցված դրույթներ, որոնք արտադրողների համար սենքի տեղային տաքացուցիչների էներգախնայողությունը բարելավելու, վերջնական սպառողների կողմից էներգախնայող արտադրանքի ձեռքբերումը խրախուսելու եւ ներքին շուկայի գործունեությանը նպաստելու խթան կհանդիսանան.
- 5) քանի որ սենքի տեղային տաքացուցիչներին բնորոշ կիրառությունը եւ հետեւաբար նաեւ էներգասպառումը տարբերվում են կարգավորվող այլ՝ տեղային տաքացուցիչ համարվող արտադրանքին բնորոշ կիրառությունից եւ էներգասպառումից, սույն կանոնակարգով պետք է ներկայացվեն այլ՝ տեղային տաքացուցիչ համարվող արտադրանքի համար նախատեսված պիտակավորման սանդղակից տարբերվող սանդղակ.
- 6) քանի որ սենքի լուսարձակող եւ խողովակավոր տեղային տաքացուցիչները մասնագետների եւ ոչ թե վերջնական սպառողների կողմից անմիջապես ձեռք բերվող արտադրատեսակներ են, սույն կանոնակարգով դրանց առնչվող էներգապիտակավորման պահանջներ չեն սահմանվում.
- 7) Հանձնաժողովի 2015/1188 (ԵՄ)¹ կանոնակարգով սենքի էլեկտրական տեղային տաքացուցիչների նկատմամբ կիրառվող նվազագույն պահանջներն ապահովում են այդ արտադրանքի տեխնիկական կատարելագործման առավելագույն ներուժը: Արդյունքում, դրանց տարբերակումը անհնար է դառնում: Սենքի էլեկտրական տեղային

¹ «Սենքի տեղային տաքացուցիչների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 28-ի 2015/1188 կանոնակարգ (ԵՄ) (տե՛ս սույն պաշտոնական տեղեկագրի 76-րդ էջը):

տաքացուցիչները չեն կարող ուղղակիորեն փոխարինվել այլ վառելիքով աշխատող՝ առավել արդյունավետ սենքի տեղային տաքացուցիչներով, եւ արդյունքում, պիտակը չի ծառայի տարբեր արտադրատեսակների հարաբերական արդյունավետության մասին սպառողներին տեղեկություններ տրամադրելու իր բուն նպատակին.

- 8) տաքացուցիչներում վերականգնվող էներգիայի օգտագործման խթանումը համահունչ է վերականգնվող էներգիայի օգտագործումը խթանելու նպատակին: Հետեւաբար անհրաժեշտ է, որ սույն կանոնակարգով տեղային տաքացուցիչների նկատմամբ սահմանվի հատուկ մոտեցում. «կենսազանգվածի պիտակի գործակցի» համար սահմանել այնպիսի արժեք, որը պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչներին հնարավորություն կտա հասնել էներգաարդյունավետության A++ դասին բացառապես պելետներ (վառելահատիկներ) օգտագործելու դեպքում.
- 9) էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ սահմանելու նպատակով պիտակի վրա ներկայացված տեղեկությունները պետք է ստացվեն հաշվարկման եւ չափման հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի մեթոդների միջոցով, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից հաշվարկման եւ չափման մեթոդների, այդ թվում՝ առկայության դեպքում եվրոպական ստանդարտացման կազմակերպությունների կողմից Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1025/2012 կանոնակարգով (ԵՄ) սահմանված ընթացակարգերին համապատասխան¹ ընդունված ներդաշնակեցված չափանիշների վրա.
- 10) սույն կանոնակարգով պետք է սահմանվի սենքի տեղային տաքացուցիչների պիտակների միասնական ձեւն ու բովանդակությունը.

¹ Խորհրդի 89/686/ԵՏՀ եւ 93/15/ԵՏՀ հրահանգներում եւ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 94/9/ԵՀ, 94/25/ԵՀ, 95/16/ԵՀ, 97/23/ԵՀ, 98/34/ԵՀ, 2004/22/ԵՀ, 2007/23/ԵՀ, 2009/23/ԵՀ եւ 2009/105/ԵՀ հրահանգները փոփոխող եւ Խորհրդի 87/95/ԵՏՀ որոշումը եւ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1673/2006/ԵՀ որոշումն ուժը կորցրած ճանաչող՝ «Եվրոպական ստանդարտացման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1025/2012 կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 316, 14.11.2012թ., էջ 12):

- 11) բացի այդ, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն պահանջներ սենքի տեղային տաքացուցիչների համար արտադրանքի տեղեկաթերթիկի կամ տեխնիկական փաստաթղթերի նկատմամբ.
- 12) ավելին, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն սենքի տեղային տաքացուցիչների հեռահար վաճառքի ցանկացած տեսակի դեպքում եւ այդպիսի սենքի տեղային տաքացուցիչների ցանկացած գովազդում եւ տեխնիկական գովազդային-քարոզչական նյութերում տրամադրվելիք տեղեկություններին ներկայացվող պահանջներ.
- 13) անհրաժեշտ է նախատեսել սույն կանոնակարգի դրույթների վերանայումը՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

Սույն կանոնակարգով սահմանվում են 50կՎտ կամ պակաս անվանական ջերմային հզորությամբ սենքի տեղային տաքացուցիչների էներգապիտակավորման մասով եւ արտադրանքի վերաբերյալ լրացուցիչ տեխնիկական բնութագրեր ներկայացնելու պահանջները:

Սույն կանոնակարգը չի տարածվում հետեւյալի վրա՝

- ա) տեղային էլեկտրական տաքացուցիչներ.
- բ) էլեկտրական ճնշակներից կամ վառելիքից ջերմանջատման համար գոլորշու խտացման կամ կլանման ցիկլ օգտագործող՝ սենքի տեղային տաքացուցիչներ.
- գ) պինդ վառելիքով աշխատող՝ այն սենքի տեղային տաքացուցիչները, որոնք նախատեսված են միայն ոչ փայտային կենսազանգվածի այրման համար.

- դ) այն սենքի տեղային տաքացուցիչները, որոնք նախատեսված են ջերմահաղորդման կամ ջերմաճառագայթման միջոցով մարդկանց համար որոշակի ջերմային հարմարավետություն ստեղծելու եւ պահպանելու նպատակով տարածքները ջեռուցելուց տարբերվող նպատակներով օգտագործման համար.
- ե) այն սենքի տեղային տաքացուցիչները, որոնք նախատեսված են միայն դրսում օգտագործման համար.
- զ) տեղային այն տաքացուցիչները, որոնց ուղղակի ջերմային հզորությունը անվանական ջերմային հզորության ուղղակի եւ անուղղակի համակցված ջերմային հզորության 6%-ից պակաս է.
- է) պինդ վառելիքով աշխատող այն սենքի տեղային տաքացուցիչները, որոնք հավաքված չեն գործարանում, կամ տեղում հավաքվող այն տաքացուցիչները, որոնք չեն տրամադրվել մեկ արտադրողի կողմից որպես պատրաստի բաղադրիչներ կամ մասեր.
- ը) սենքի լուսարձակող տեղային տաքացուցիչները եւ խողովակավոր տեղային տաքացուցիչները.
- թ) օդատաքացուցիչները.
- ժ) շոգեբաղնիքի վառարանները:

Հոդված 2

Սահմանումներ

Ի լրումն 2010/30/ԵՄ հրահանգի 2-րդ հոդվածով սահմանված սահմանումների՝ սույն կանոնակարգի կիրառման նպատակներով օգտագործվում են հետեւյալ սահմանումները.

- 1) «սենքի տեղային տաքացուցիչ» նշանակում է տարածքի տեղային ջեռուցման սարք, որում ջերմային էներգիան անջատվում է ուղղակի ջերմափոխանցման կամ հեղուկ ջերմակրին փոխանցման հետ համակցված ուղղակի ջերմափոխանցման միջոցով, եւ որը նախատեսված են այն փակ տարածքում, որտեղ արտադրանքը տեղադրված է, մարդկանց համար ջերմային հարմարավետության որոշակի մակարդակ ապահովելու եւ այդ մակարդակը պահպանելու համար՝ հնարավոր է նաեւ այլ տարածքներ ջերմափոխանցման համակցումով, եւ սարքավորված է մեկ կամ ավելի ջերմագեներատորներով, որոնք էլեկտրական էներգիան կամ գազային, հեղուկ կամ պինդ վառելիքն ուղղակիորեն փոխակերպում են ջերմության՝ հոսանքի ջերմային ազդեցության՝ Ջոուլի օրենքի կիրառման կամ համապատասխանաբար վառելիքի այրման միջոցով.
- 2) «պինդ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչ» նշանակում է բաց առաջնամասով սենքի տեղային տաքացուցիչ, փակ առաջնամասով տեղային տաքացուցիչ կամ պինդ վառելիքով աշխատող խոհանոցային վառարան.
- 3) «գազային վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչ» նշանակում է գազային վառելիքով աշխատող՝ բաց առաջնամասով սենքի տեղային տաքացուցիչ կամ փակ առաջնամասով սենքի տեղային տաքացուցիչ.
- 4) «հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչ» նշանակում է հեղուկ վառելիքով աշխատող՝ բաց առաջնամասով սենքի տեղային տաքացուցիչ կամ փակ առաջնամասով սենքի տեղային տաքացուցիչ.
- 5) «սենքի էլեկտրական տեղային տաքացուցիչ» նշանակում է սենքի տեղային տաքացուցիչ, որը կիրառում է հոսանքի Ջոուլի՝ ջերմային ազդեցության օրենքը՝ ջերմություն արտադրելու համար.
- 6) «բաց առաջնամասով սենքի տեղային տաքացուցիչ» նշանակում է գազային, հեղուկ կամ պինդ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչ, որի

այրման հատվածը եւ այրման գազերը հերմետիկորեն անջատված չեն այն տարածքից, որտեղ տեղադրված է արտադրատեսակը, եւ որը միացված է ծխնելույզին կամ հնոցի անցքին, կամ որի այրման արգասիքների հեռացման համար պահանջվում է ծխանցքի առկայություն.

- 7) «փակ առաջնամասով սենքի տեղային տաքացուցիչ» նշանակում է գազային, հեղուկ կամ պինդ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչ, որի այրման հատվածը եւ այրման գազերը կարող են հերմետիկորեն անջատվել այն տարածքից, որտեղ տեղադրված է արտադրատեսակը, եւ որը դուրս է բերվում ծխատարով կամ հնոցի անցքով, կամ որի այրման արգասիքների հեռացման համար պահանջվում է ծխանցքի առկայություն.
- 8) «խոհանոցային վառարան (կրակարան)» նշանակում է պինդ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչ, որը մեկ խցում ներառում է սենքի տեղային տաքացուցչի գործառույթը եւ սալօջախը, ջեռոցը կամ երկուսն էլ՝ սննդի պատրաստման համար, եւ որը դուրս է բերվում ծխատարով կամ հնոցի անցքով, կամ որի այրման արգասիքների հեռացման համար պահանջվում է ծխանցքի առկայություն.
- 9) «վառելիքով աշխատող տեղային տաքացուցիչ» նշանակում է բաց առաջնամասով սենքի տեղային տաքացուցիչ կամ փակ առաջնամասով սենքի տեղային տաքացուցիչ կամ խոհանոցային վառարան.
- 10) «սենքի լուսարձակող տեղային տաքացուցիչ» նշանակում է գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչ, որը սարքավորված է այրիչով, պետք է տեղադրվի գլխի մակերեսույթից բարձր, ուղղված լինի դեպի օգտագործման տեղն այնպես, որ այրիչի կողմից ջերմության անջատումը, որը գլխավորապես ինֆրակարմիր ճառագայթում է, անմիջապես տաքացնի տաքացման ենթակա առարկաները, եւ որի այրման արգասիքները արտազատվում են այն սենքում, որտեղ դրանք տեղադրված են.

- 11) «սենքի խողովակավոր տեղային տաքացուցիչ» նշանակում է գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչ, որը սարքավորված է այրիչով, պետք է տեղադրվի գլխի մակերեսային բարձր, տաքացվող առարկաների կողքին, ջեռուցում է սենքը գլխավորապես խողովակից կամ այրման արգասիքների՝ ներքին ուղիներով անցնելու միջոցով տաքացվող խողովակներից առաջացող ինֆրակարմիր ճառագայթման միջոցով, եւ որի այրման արգասիքները հեռացվում են ծխանցքի միջոցով.
- 12) «ծխանցք չունեցող տաքացուցիչ» նշանակում է գազային, հեղուկ կամ պինդ վառելիքով աշխատող՝ սենքի լուսարձակող տեղային տաքացուցիչ տարբեր սենքի տեղային տաքացուցիչ, որն իր այրման արգասիքներն արտազատում է այն տարածք, որտեղ գտնվում է արտադրանքը.
- 13) «դեպի ծխնելույզ բաց մուտքով տաքացուցիչ» նշանակում է գազային, հեղուկ կամ պինդ վառելիքով աշխատող տեղային տաքացուցիչ, որը նախատեսված է ծխնելույզի տակ կամ հնոցում տեղադրման համար՝ չփակելով արտադրանքի եւ ծխատարի կամ հնոցի անցքի միջեւ օդի հոսքը եւ թույլ տալով, որ այրման արգասիքներն այրման հատվածից անխոչընդոտ անցնեն ծխատար կամ ծխանցք.
- 14) «օդատաքացուցիչ» նշանակում է արտադրանք, որը ջերմություն է մատակարարում միայն օդով տաքացվող խողովակային ջեռուցման համակարգին եւ նախատեսված է որոշակի տեղում ամրացված կամ ամրակցված օգտագործման կամ պատի վրա տեղադրման համար, որը տեղաբաշխում է օդն օդափուք սարքի միջոցով այն փակ տարածքում, որտեղ տեղադրված է արտադրանքը, մարդկանց համար ջերմային հարմարավետության որոշակի մակարդակ ապահովելու եւ այդ մակարդակը պահպանելու համար.

- 15) «շոգեբաղնիքի վառարան» նշանակում է սենքի տեղային տաքացուցիչ, որը ներկառուցված է կամ նախատեսված է չոր կամ թաց շոգեբաղնիքներում կամ նմանատիպ միջավայրերում օգտագործման համար.
- 16) «պինդ վառելիք» նշանակում է վառելիք, որը պինդ է սովորական սենյակային ջերմաստիճանում, այդ թվում՝ պինդ կենսազանգված եւ պինդ հանածո վառելիք.
- 17) «կենսազանգված» նշանակում է գյուղատնտեսության (ներառյալ՝ բուսական եւ կենդանական ծագման նյութերը), անտառատնտեսության եւ հարակից արդյունաբերությունների, այդ թվում՝ ձկնարդյունաբերության եւ ջրային տնտեսության կենսաբանական ծագման արտադրանքի, թափոնների եւ մնացորդների, ինչպես նաեւ արդյունաբերական եւ քաղաքային թափոնների կենսաբանորեն քայքայվող մասը.
- 18) «փայտային կենսազանգված» նշանակում է կենսազանգված, որն առաջացել է ծառերից, թփերից ու թփիկներից, այդ թվում՝ գերանները, փայտյա տաշեղները, պելետների տեսքով սեղմված փայտը, բրիկետների տեսքով սեղմված փայտը եւ փայտաթեփը.
- 19) «ոչ փայտային կենսազանգված» նշանակում է փայտային կենսազանգվածից տարբեր կենսազանգված՝ ներառյալ, ի թիվս այլնի, ծղոտ, չինական եղեգ, շամբ, կորիզներ, հատիկներ, ձիթապտղի կորիզ, ձիթապտղի քուսպ եւ ընկույզի կեղեւ.
- 20) «նախընտրելի վառելիք» նշանակում է վառելիքի այն տեսակը, որը, համաձայն մատակարարի հրահանգների, նախընտրելի է սենքի տեղային տաքացուցչի դեպքում օգտագործման համար.
- 21) «հանածո վառելիք» նշանակում է կենսազանգվածից տարբեր այլ պինդ վառելիք, այդ թվում՝ անտրացիտը եւ չոր էներգետիկ ածուխը, պինդ կոքսը, կիսակոքսը, բիտումային ածուխը, լիզնիտը, հանածո վառելիքների խառնուրդը կամ կենսազանգվածի եւ հանածո վառելիքի խառնուրդը. սույն կանոնակարգի նպատակներով ցանկը ներառում է նաեւ տորֆը.

- 22) «վառելիքի այլ համապատասխան տեսակներ» նշանակում է նախընտրելի վառելիքից տարբեր վառելիք, որը, մատակարարի հրահանգի համաձայն, կարող է օգտագործվել սենքի տեղային տաքացուցչի մեջ եւ ներառում է վառելիքի ցանկացած տեսակ, որը նշված է տեղադրողների եւ վերջնական սպառողների համար նախատեսված ցուցումների ձեռնարկում, արտադրողների եւ մատակարարների ազատ հասանելիության կայքերում, տեխնիկական կամ գովազդային-քարոզչական նյութերում եւ գովազդներում.
- 23) «ուղղակի ջերմային հզորություն» նշանակում է արտադրանքի ջերմային հզորությունը ճառագայթման եւ արտադրանքի կողմից օդում անջատված ջերմության փոխանցման միջոցով՝ բացառությամբ արտադրանքի՝ կՎտ-ով արտահայտված այն ջերմային հզորության, որը փոխանցվել է հեղուկ ջերմակրին.
- 24) «անուղղակի ջերմային հզորություն» նշանակում է արտադրանքի՝ կՎտ-ով արտահայտված այն ջերմային հզորությունը, որը փոխանցվել է հեղուկ ջերմակրին ջերմային էներգիայի արտադրության նույն գործընթացի միջոցով, որով ապահովվում է արտադրանքի ուղղակի ջերմային հզորությունը.
- 25) «անուղղակի ջեռուցման ֆունկցիոնալ հնարավորություն» նշանակում է արտադրանքի՝ ջերմային ընդհանուր հզորությունը հեղուկ ջերմակրին փոխանցելու կարողությունը՝ սենքի ջեռուցման կամ կենցաղային տաք ջրի արտադրության նպատակով օգտագործման համար.
- 26) «անվանական ջերմային հզորություն» (*P_{անվ.}*) նշանակում է սենքի տեղային տաքացուցչի՝ կՎտ-ով արտահայտված ջերմային հզորությունը, որը ներառում է ուղղակի ջերմային հզորությունը եւ անուղղակի ջերմային հզորությունը (անհրաժեշտության դեպքում), երբ այն աշխատում է մատակարարի կողմից հայտարարված՝ առավելագույն ջերմային հզորության ռեժիմով, որը կարող է պահպանվել տեսական ժամանակահատվածի ընթացքում.

- 27) «նվազագույն ջերմային հզորություն» ($P_{\text{վազ.}}$) նշանակում է սենքի տեղային տաքացուցչի՝ կվտ-ով արտահայտված ջերմային հզորությունը, որը ներառում է ուղղակի ջերմային հզորությունը եւ անուղղակի ջերմային հզորությունը (անհրաժեշտության դեպքում), երբ այն աշխատում է մատակարարի կողմից հայտարարված՝ նվազագույն ջերմային հզորության ռեժիմով.
- 28) «բացօթյա օգտագործման համար նախատեսված» նշանակում է, որ արտադրանքը հարմար է փակ տարածքներից դուրս անվտանգ շահագործման, այդ թվում՝ բացօթյա պայմաններում հնարավոր օգտագործման համար.
- 29) «համարժեք մոդել» նշանակում է մոդել, որը շուկայահանվել է V հավելվածի 2-րդ կամ 3-րդ աղյուսակներում սահմանված տեխնիկական նույն պարամետրերով, ինչ միեւնույն մատակարարի կողմից շուկայահանված մեկ այլ մոդել:

II-IX հավելվածների նպատակներով լրացուցիչ սահմանումները տրված են I հավելվածում:

Հոդված 3

Մատակարարների պարտականությունները եւ ժամանակացույցը

1. 2018 թվականի հունվարի 1-ից մատակարարները, որոնք շուկայահանում կամ շահագործում են այնպիսի սենքի տեղային տաքացուցիչներ, որոնք պինդ վառելիքով աշխատող ծխանցք չունեցող տաքացուցիչներ կամ պինդ վառելիքով աշխատող դեպի ծխնելույզ բաց մուտքով տաքացուցիչներ չեն, պետք է ապահովեն հետեւյալը՝

- ա) այդպիսի տեղային տաքացուցիչն ապահովված է III հավելվածի 1-ին կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով, ինչպես նաեւ II հավելվածով սահմանված՝ էներգաարդյունավետության դասերին համապատասխանող տպագրված պիտակով.
- բ) այդպիսի տեղային տաքացուցչի մոդելի համար վաճառողներին տրամադրվում է III հավելվածի 1-ին կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով, ինչպես նաեւ II հավելվածով սահմանված էներգաարդյունավետության դասերին համապատասխանող էլեկտրոնային պիտակ.
- գ) այդպիսի սենքի տեղային տաքացուցիչը, IV հավելվածին համապատասխան, ապահովվում է արտադրանքի տեղեկաթերթիկով.
- դ) այդպիսի տեղային տաքացուցչի համար, IV հավելվածին համապատասխան, վաճառողներին տրամադրվում է արտադրանքի տեխնիկական տվյալների էլեկտրոնային տեղեկաթերթիկ.
- ե) անդամ պետությունների մարմինների եւ Հանձնաժողովի պահանջով տրամադրվում են V հավելվածով սահմանված տեխնիկական փաստաթղթերը.
- զ) կոնկրետ սենքի տեղային տաքացուցչի մոդելին վերաբերող եւ էներգասպառման կամ էներգափնայողության կամ գնի մասին տեղեկություններ պարունակող ցանկացած գովազդ ներառում է այդ մոդելի էներգաարդյունավետության դասի նշում.
- է) կոնկրետ սենքի տեղային տաքացուցչի մոդելին վերաբերող եւ դրան բնորոշ տեխնիկական պարամետրերը նկարագրող ցանկացած տեխնիկական գովազդային-քարոզչական նյութ ներառում է այդ մոդելի էներգաարդյունավետության դասի նշում:
2. 2022 թվականի հունվարի 1-ից մատակարարները, որոնք շուկայահանում կամ շահագործում են պինդ վառելիքով աշխատող, ծխանցք չունեցող

տաքացուցիչներ կամ պինդ վառելիքով աշխատող, դեպի ծխնելույզ բաց մուտքով տաքացուցիչներ, պետք է ապահովեն հետեւյալը՝

- ա) այդպիսի սենքի տեղային տաքացուցիչն ապահովվում է III հավելվածի 1-ին կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով, ինչպես նաեւ II հավելվածով սահմանված էներգաարդյունավետության դասերին համապատասխանող տպագրված պիտակով.
- բ) այդպիսի սենքի տեղային տաքացուցչի մոդելի համար վաճառողներին տրամադրվում է III հավելվածի 1-ին կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով, ինչպես նաեւ II հավելվածով սահմանված էներգաարդյունավետության դասերին համապատասխանող էլեկտրոնային պիտակ.
- գ) այդպիսի տեղային տաքացուցիչը, IV հավելվածին համապատասխան, ապահովվում է արտադրանքի տեղեկաթերթիկով.
- դ) այդպիսի տեղային տաքացուցչի համար, IV հավելվածին համապատասխան, վաճառողներին տրամադրվում է արտադրանքի տեխնիկական տվյալների էլեկտրոնային տեղեկաթերթիկ.
- ե) անդամ պետությունների մարմինների եւ Հանձնաժողովի պահանջով տրամադրվում են V հավելվածով սահմանված տեխնիկական փաստաթղթերը.
- զ) կոնկրետ սենքի տեղային տաքացուցչի մոդելին վերաբերող եւ էներգասպառման կամ էներգախնայողության կամ գնի մասին տեղեկություններ պարունակող ցանկացած գովազդ ներառում է այդ մոդելի էներգաարդյունավետության դասի նշում.
- է) կոնկրետ սենքի տեղային տաքացուցչի մոդելին վերաբերող եւ դրան բնորոշ տեխնիկական պարամետրերը նկարագրող ցանկացած տեխնիկական գովազդային-քարոզչական նյութ ներառում է այդ մոդելի էներգաարդյունավետության դասի նշում:

*Հոդված 4***Վաճառողների պարտականությունները**

Սենքի տեղային տաքացուցիչներ վաճառողներն ապահովում են հետևյալը՝

- ա) վաճառքի կետում յուրաքանչյուր տեղային տաքացուցիչ իր առաջնամասի արտաքին մակերեսային կրում է մատակարարների կողմից 3-րդ հոդվածին համապատասխան տրամադրված պիտակն այնպես, որ այն հստակորեն տեսանելի լինի.
- բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող սենքի տեղային տաքացուցիչներն այն դեպքում, երբ վերջնական սպառողը չի կարող տեսնել ցուցադրված արտադրանքը, վաճառվում են մատակարարների կողմից VI հավելվածին համապատասխան տրամադրված տեղեկություններով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաջարկը ներկայացվել է համացանցով, որի դեպքում կիրառվում են VII հավելվածի դրույթները.
- գ) կոնկրետ սենքի տեղային տաքացուցչի մոդելի համար եւ էներգասպառման կամ էներգախնայողության կամ գնի մասին տեղեկություններ պարունակող ցանկացած գովազդ ներառում է այդ մոդելի էներգաարդյունավետության դասի նշում.
- դ) կոնկրետ սենքի տեղային տաքացուցչի մոդելին վերաբերող եւ դրան բնորոշ տեխնիկական պարամետրերը նկարագրող ցանկացած տեխնիկական գովազդային-քարոզչական նյութ ներառում է այդ մոդելի էներգաարդյունավետության դասի նշում:

*Հոդված 5***Չափման եւ հաշվարկման մեթոդները**

3-րդ եւ 4-րդ հոդվածների համաձայն տրամադրվող տեղեկությունները ձեռք են բերվում հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման եւ հաշվարկման մեթոդներով, որոնք հիմնվում են VIII հավելվածով սահմանված՝ համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման եւ հաշվարկման մեթոդների վրա:

*Հոդված 6***Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը**

Էներգաարդյունավետության հայտարարված դասին սենքի տեղային տաքացուցիչների համապատասխանությունը գնահատելիս անդամ պետությունները կիրառում են IX հավելվածով սահմանված ընթացակարգը:

*Հոդված 7***Վերանայումը**

Հանձնաժողովը ոչ ուշ, քան 2024 թվականի հունվարի 1-ը վերանայում է սույն կանոնակարգը՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը: Վերանայման արդյունքում մասնավորապես գնահատվում է, թե արդյոք կանոնակարգի կիրառման բացառությունները կարող են նվազեցվել:

*Հոդված 8***Ուժի մեջ մտնելը**

1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակմանը հաջորդող քսաներորդ օրը:
2. Այն սենքի տեղային տաքացուցիչների համար, որոնք պինդ վառելիքով աշխատող, ծխանցք չունեցող տաքացուցիչներ եւ պինդ վառելիքով աշխատող, դեպի ծխնելույզ բաց մուտքով տաքացուցիչներ չեն, այն կիրառվում է 2018 թվականի հունվարի 1-ից: Այնուամենայնիվ, 3(1)(գ) եւ (է) հոդվածը եւ 4(բ), (գ) եւ (դ) հոդվածը կիրառվում են 2018 թվականի ապրիլի 1-ից:
3. Այն սենքի տեղային տաքացուցիչների համար, որոնք պինդ վառելիքով աշխատող, ծխանցք չունեցող տաքացուցիչներ կամ պինդ վառելիքով աշխատող, դեպի ծխատար բաց մուտքով տաքացուցիչներ են, այն կիրառվում է 2022 թվականի հունվարի 1-ից: Այնուամենայնիվ, 3(2)(գ) եւ (է) հոդվածը եւ 4(բ), (գ) եւ (դ) հոդվածը կիրառվում են 2022 թվականի ապրիլի 1-ից:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2015 թվականի ապրիլի 24-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժան-Կլոդ ԶՈՒՆԿԵՐ

*ՀԱՎԵԼՎԱԾ I***II-ից IX հավելվածների համար կիրառելի սահմանումները**

II-ից IX հավելվածների նպատակով կիրառվում են հետևյալ սահմանումները.

- 1) «փոխարկման գործակից» (ՓԳ) նշանակում է գործակից, որն արտացոլում է Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2012/27/ԵՄ հրահանգում նշված՝ ԵՄ-ում էլեկտրաէներգիայի արտադրության օգտակար գործողության միջին գործակցի գնահատված 40%-ը¹. փոխարկման գործակցի արժեքն է $\Phi = 2,5$.
- 2) «ստորին այրման ջերմատվության արժեք» (ՍՋԱ) նշանակում է վառելիքի համապատասխան խոնավություն պարունակող՝ վառելիքի միավորի կողմից անջատված ընդհանուր ջերմաքանակը, երբ այդ վառելիքն ամբողջությամբ այրվում է թթվածնի հետ, և երբ այրման արգասիքների ջերմաստիճանը չի վերադառնում շրջակա միջավայրի ջերմաստիճանին.
- 3) «օգտակար էներգաարդյունավետությունն անվանական կամ նվազագույն ջերմային հզորության դեպքում» (համապատասխանաբար՝ $\eta_{th,անվ.}$ or $\eta_{th,նվազ.}$) նշանակում է օգտակար ջերմային հզորության և ընդհանուր սպառվող հզորության հարաբերակցությունը, որն արտահայտվում է սենքի տեղային տաքացուցչի ՍՋԱ-ով՝ տոկոսներով.
- 4) «էլեկտրաէներգիայի պահանջումն անվանական ջերմային հզորության դեպքում» ($\xi_{տաք.}$) նշանակում է սենքի տեղային տաքացուցչի կողմից էլեկտրաէներգիայի սպառումն անվանական ջերմային հզորություն ապահովելիս: Էլեկտրաէներգիայի սպառումը՝ արտահայտված կՎտ-ով, սահմանվում է՝ հաշվի չառնելով շրջապատիչի կողմից էներգիայի սպառումն այն դեպքում, երբ արտադրանքն ունի անուղղակի ջեռուցման ֆունկցիոնալ հնարավորություն և սարքավորված է շրջապատիչով.

¹ 2009/125/ԵՀ և 2010/30/ԵՄ հրահանգները փոփոխող և 2004/8/ԵՀ և 2006/32/ԵՀ հրահանգներն ուժը կորցրած ճանաչող՝ «էներգաարդյունավետության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի 2012/27/ԵՄ հրահանգ (ՊՏ L 315, 14.11.2012թ., էջ 1):

- 5) «Էլեկտրաէներգիայի պահանջմունքը նվազագույն ջերմային հզորության դեպքում» (էլ_{նվազ}) նշանակում է սենքի տեղային տաքացուցչի կողմից էլեկտրաէներգիայի սպառումը նվազագույն ջերմային հզորություն ապահովելիս: Էլեկտրաէներգիայի սպառումը՝ արտահայտված կՎտ-ով, սահմանվում է՝ հաշվի չառնելով շրջապատիչի կողմից էներգիայի սպառումն այն դեպքում, երբ արտադրանքն ունի անուղղակի ջեռուցման ֆունկցիոնալ հնարավորություն եւ սարքավորված է շրջապատիչով.
- 6) «Էլեկտրաէներգիայի պահանջմունքը սպասման ռեժիմում» (էլ_{սպ.}) նշանակում է արտադրանքի կողմից էլեկտրաէներգիայի սպառումն սպասման ռեժիմում՝ արտահայտված կՎտ-ով.
- 7) «մշտական բռնկման բոցի հզորության պահանջմունք» (P_{բռնկ. բոց}) նշանակում է արտադրանքի կողմից գազային, հեղուկ կամ պինդ վառելիքի սպառումը՝ արտահայտված կՎտ-ով, անվանական կամ մասնակի ջերմային բեռնվածության համար անհրաժեշտ առավել հզոր այրման գործընթացի համար նախքան հիմնական այրիչի միանալն ավելի քան 5 րոպե վառքի դեպքում որպես բոցավառման աղբյուր ծառայելու նպատակով.
- 8) «միաֆազ ջերմային հզորություն՝ առանց սենյակային ջերմաստիճանի կարգավորման հնարավորության» նշանակում է, որ արտադրատեսակը չունի իր ջերմային հզորությունն ավտոմատ փոփոխելու հնարավորություն, եւ չկա սենյակային ջերմաստիճանի հետադարձ կապի մեխանիզմ, որը հնարավոր կդարձնէր ջերմային հզորության ավտոմատ կարգավորումը.
- 9) «ձեռքով կարգավորվող երկու կամ ավելի ֆազեր՝ առանց սենյակային ջերմաստիճանի կարգավորման հնարավորության» նշանակում է արտադրանքն ունի ջերմային հզորության երկու կամ ավելի մակարդակների միջոցով իր ջերմային հզորությունը ձեռքով փոփոխելու հնարավորություն եւ սարքավորված չէ այնպիսի սարքով, որն ավտոմատ կարգավորում է ջերմային հզորությունը՝ ըստ պահանջվող սենյակային ջերմաստիճանի.

- 10) «մեխանիկական ջերմապահպանիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի կարգավորման մեխանիզմով» նշանակում է, որ արտադրատեսակը սարքավորված է ոչ էլեկտրոնային սարքով, որը հնարավորություն է տալիս, որ արտադրատեսակը որոշակի ժամանակահատվածի ընթացքում ավտոմատ փոփոխի իր ջերմային հզորությունը՝ սենյակային ջերմային հարմարավետության պահանջվող մակարդակի հետ այն հարմարեցնելով.
- 11) «սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով» նշանակում է, որ արտադրանքը սարքավորված է ներկառուցված կամ առանձին էլեկտրոնային սարքով, որը հնարավորություն է տալիս, որ արտադրանքը որոշակի ժամանակահատվածի ընթացքում ավտոմատ փոփոխի իր ջերմային հզորությունը սենյակային ջերմային հարմարավետության պահանջվող մակարդակի հետ այն հարմարեցնելով.
- 12) «ավտոմատ միացման օրական ժամակարգավորիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով» նշանակում է, որ արտադրատեսակը սարքավորված է ներկառուցված կամ առանձին էլեկտրոնային սարքով, որը հնարավորություն է տալիս, որ արտադրատեսակը որոշակի ժամանակահատվածի ընթացքում ավտոմատ փոփոխի իր ջերմային հզորությունը՝ սենյակային ջերմային հարմարավետության պահանջվող մակարդակի հետ այն հարմարեցնելով, ինչպես նաև հնարավորություն է տալիս սահմանել ժամանակն ու ջերմաստիճանի մակարդակը ժամակարգավորչի 24-ժամյա միջակայքով.
- 13) «ավտոմատ միացման շաբաթական ժամակարգավորիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով» նշանակում է, որ արտադրատեսակը սարքավորված է ներկառուցված կամ առանձին էլեկտրոնային սարքով, որը հնարավորություն է տալիս, որ արտադրատեսակը որոշակի ժամանակահատվածի ընթացքում ավտոմատ փոփոխի իր ջերմային հզորությունը՝ սենյակային ջերմային հարմարավետության պահանջվող մակարդակի հետ այն հարմարեցնելով,

ինչպես նաև հնարավորություն է տալիս սահմանել ժամանակն ու ջերմաստիճանի մակարդակը մեկ ամբողջ շաբաթվա համար: Այդ 7-օրյա ժամկետի ընթացքում սահմանված պարամետրերը պետք է օրական կտրվածքով փոփոխման հնարավորություն տան.

- 14) «ներկայության դետեկտորով սենյակային ջերմաստիճանի կարգավորում» նշանակում է, որ արտադրատեսակը սարքավորված է ներկառուցված կամ առանձին էլեկտրոնային սարքով, որն ավտոմատ նվազեցնում է սենյակային ջերմաստիճանի տրված մեծությունը, երբ սենյակում որեւէ մեկի ներկայությունը չի ճանաչվում.
- 15) «բաց պատուհանի դետեկտորով սենյակային ջերմաստիճանի կարգավորում» նշանակում է, որ արտադրանքը սարքավորված է ներկառուցված կամ առանձին էլեկտրոնային սարքով, որը նվազեցնում է ջերմային հզորությունը պատուհանը կամ դուռը բաց լինելու դեպքում: Երբ պատուհանի կամ դռան բացվելը ճանաչելու համար օգտագործվում է սենսոր, այն կարող է տեղադրվել արտադրատեսակի հետ համատեղ, արտադրատեսակից առանձին, ներկառուցվել շենքի կառուցվածքի մեջ կամ կարող է տեղի ունենալ այդ տարբերակների համակցությունը.
- 16) «հեռակառավարման հնարավորությամբ» նշանակում է գործառույթ, որը արտադրանքի հեռակառավարման վահանակի միջոցով հեռահար ազդեցության հնարավորություն է տալիս այն շենքից դուրս, որտեղ տեղադրված է արտադրանքը.
- 17) «սպասման ռեժիմ» նշանակում է վիճակ, երբ արտադրանքը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին, նախատեսված ձեռով աշխատելու համար կախված է էլեկտրասնուցման աղբյուրից ստացվող էներգիայից եւ կատարում է միայն հետեւյալ գործառույթները, որոնք կարող են շարունակվել անորոշ ժամանակով՝ վերաակտիվացման գործառույթ կամ վերաակտիվացման գործառույթ՝ միայն վերաակտիվացման գործառույթի

ակտիվացման նշումով եւ (կամ) տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրում ցուցասարքի վրա.

- 18) «մոդելի նույնականացուցիչ» նշանակում է սովորաբար տառաթվային ծածկագիր, որով որոշակի սենքի տեղային տաքացուցչի մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով, մատակարարի կամ վաճառողի անվանմամբ այլ մոդելներից.
- 19) «այլ հանածո վառելիք» նշանակում է անտրացիտից եւ չոր էներգետիկ ածխից, պինդ կոքսից, կիսակոքսից, բիտումային ածխից, լիգնիտից, տորֆից կամ հանածո վառելիքի խառնուրդից պատրաստված բրիկետներից տարբերվող հանածո վառելիք.
- 20) «այլ ոչ փայտային կենսազանգված» նշանակում է 25% կամ դրանից ցածր խոնավության պարունակությամբ գերաններից, 14%-ից ցածր խոնավության պարունակությամբ բրիկետացված վառելիքից, 12%-ից ցածր խոնավության պարունակությամբ սեղմված փայտից տարբերվող փայտային կենսազանգված.
- 21) «խոնավության պարունակություն» նշանակում է սենքի տեղային տաքացուցչում օգտագործվող վառելիքի ընդհանուր զանգվածի նկատմամբ վառելիքում առկա ջրի զանգվածը:

ՀԱՎԵԼՎԱԾ II

Էներգաարդյունավետության դասերը

Սենքի տեղային տաքացուցչի էներգաարդյունավետության դասը որոշվում է դրա էներգաարդյունավետության ինդեքսին համապատասխան, ինչպես սահմանված է 1-ին աղյուսակով:

*Աղյուսակ 1***Սենքի տեղային տաքացուցիչների էներգաարդյունավետության դասերը**


Էներգաարդյունավետության դասը	Էներգաարդյունավետության ինդեքսը (ԷԱԻ)
A++	$ԷԱԻ < 130$
A+	$107 \leq ԷԱԻ < 130$
A	$88 \leq ԷԱԻ < 107$
B	$82 \leq ԷԱԻ < 88$
C	$77 \leq ԷԱԻ < 82$
D	$72 \leq ԷԱԻ < 77$
E	$62 \leq ԷԱԻ < 72$
F	$42 \leq ԷԱԻ < 62$
G	$ԷԱԻ < 42$

Սենքի տեղային տաքացուցչի էներգաարդյունավետության ինդեքսը հաշվարկվում է VIII հավելվածին համապատասխան:

ՀԱՎԵԼՎԱԾ III

Պիտակը

1. Սենքի տեղային տաքացուցիչներ



ա) Հետևյալ տեղեկությունները ներառվում են պիտակի վրա՝

I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.

II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը.

III. Էներգաարդյունավետության դասը՝ սահմանված II հավելվածի 1-ին կետին համապատասխան. սենքի տեղային տաքացուցչի էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը

պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը.

IV. ուղղակի ջերմային հզորության պայմանանշանը.


V. ուղղակի ջերմային հզորությունը կՎտ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ տասնորդական նիշը.

VI. ջերմությունը հեղուկ ջերմակրին փոխանցելու կարողությամբ սենքի տեղային տաքացուցիչների համար՝ անուղղակի ջերմային հզորության պայմանանշանը.

VII. ջերմությունը հեղուկ ջերմակրին փոխանցելու կարողությամբ սենքի տեղային տաքացուցիչների համար՝ անուղղակի ջերմային հզորությունը կՎտ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ տասնորդական նիշը:

բ) Սենքի տեղային տաքացուցիչների պիտակի դիզայնին վերաբերող ասպեկտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 2-րդ կետին:

2. Սենքի տեղային տաքացուցիչների պիտակը պետք է ունենա հետեւյալ դիզայնը՝



որտեղ՝

ա) պիտակը պետք է ունենա առնվազն 105 մմ լայնություն եւ 200 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրվում է ավելի մեծ ձեւաչափով, դրա բովանդակությունը, այնուամենայնիվ, պետք է համաչափ մնա վերը նշված տեխնիկական մասնագրերին.

բ) Ֆոնը պետք է լինի սպիտակ.

գ) գույները պետք է ունենան ԿԿԴՍ ծածկագիրը՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին, սեւ՝ հետտեյալ օրինակի համաձայն՝ 00-70-X-00՝ 0 % կապտականաչ, 70 % կարմրամանուշակագույն, 100 % դեղին, 0 % սեւ.

դ) Պիտակը պետք է բավարարի բոլոր հետևյալ պահանջները (թվերը վերցված են վերոնշյալ սխեմայից)՝

1. **ԵՄ պիտակի եզրագիծը՝** 4 կետ. գույնը՝ 100 % կապտականաչ. կլոր անկյուններ՝ 3.5 մմ:
2. **ԵՄ պատկերանշան՝** Գույները՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:
3. **Էներգապիտակ՝** Գույնը՝ X-00-00-00: Գրաֆիկական պատկերը՝ ինչպես ցուցադրված է՝ ԵՄ պատկերանիշ + էներգաարդյունավետության պիտակներ՝ լայնություն՝ 86 մմ, բարձրություն՝ 17 մմ:
4. **Պատկերանիշի տակ գտնվող գիծը՝** 1 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ. երկարություն՝ 86 մմ:
5. **Էներգաարդյունավետության դասերի սանդղակ**
 - **Սլաք՝** բարձրություն՝ 6 մմ, բացատ՝ 1.3 մմ, գույներ՝
Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,
Երկրորդ դասը՝ 70-00-X-00,
Երրորդ դասը՝ 30-00-X-00,
Չորրորդ դասը՝ 00-00-X-00,
Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,
Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,
Յոթերորդ դասը՝ 00-X-X-00,
Ութերորդ դասը՝ 00-X-X-00,
Վերջին դասը՝ 00-X-X-00:
 - **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 14 կետ, գլխատառերով, սպիտակ, «+» պայմանանշանները՝ տողավերեւի, գտնվում են մեկ

շարքի վրա:

6. Էներգաարդյունավետության դասը՝

- **Սլաք՝** լայնություն՝ 22 մմ, բարձրություն՝ 12 մմ, 100 % սեւ,
- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, գլխատառերով, սպիտակ, «+» պայմանանշանները՝ տողավերեւի, գտնվում են մեկ շարքի վրա:

7. Ուղղակի ջեռուցման ֆունկցիոնալ հնարավորություն՝

- **Գրաֆիկական պատկերը՝** ինչպես ցուցադրված է,
- **Եզրագիծը՝** 2 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3.5 մմ:

**8. Անուղղակի ջեռուցման ֆունկցիոնալ հնարավորություն՝
անհրաժեշտության դեպքում՝**

- **Գրաֆիկական պատկերը՝** ինչպես ցուցադրված է,
- **Եզրագիծը՝** 2 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3.5 մմ:

9. Անվանական ուղղակի ջերմային հզորություն՝

- **Եզրագիծը՝** 2 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3.5 մմ,
- **«XY,Z» արժեքներ.** «Կալիբրի» տառատեսակ, թավ 34 կետ, 100 % սեւ,
- **Տեքստ «կՎտ»՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 18 կետ, 100 % սեւ:

**10. Անվանական անուղղակի ջերմային հզորություն՝
անհրաժեշտության դեպքում՝**

- **Եզրագիծը՝** 2 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3.5 մմ,
- **«XY,Z» արժեքներ.** «Կալիբրի» տառատեսակ, թավ 34 կետ, 100 % սեւ,
- **Տեքստ «կվտ»՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 18 կետ, 100 % սեւ:

11. Էներգիա՝

- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 8 կետ, 100 % սեւ:

12. Պիտակի ներմուծման տարին եւ կանոնակարգի համարը.

- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 10 կետ:

13. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը:

14. Մատակարարի մոդելի նույնականացուցիչը.

- Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 86 * 12 մմ տարածքում:

*ՀԱՎԵԼՎԱԾ IV***Արտադրանքի տեղեկաթերթիկը**

1. Սենքի տեղային տաքացուցչի տեղեկաթերթիկում պարունակվող տեղեկությունները պետք է ներկայացվեն հետևյալ հաջորդականությամբ եւ պետք է ներառվեն արտադրանքի վերաբերյալ բրոշյուրում կամ արտադրանքի հետ ներկայացվող այլ գրականության մեջ՝
 - ա) մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
 - բ) մատակարարի մոդելի նույնականացուցիչը.
 - գ) մոդելի էներգաարդյունավետության դասը, որը սահմանվում է II հավելվածի 1-ին կետին համապատասխան.
 - դ) ուղղակի ջերմային հզորությունը կՎտ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ տասնորդական նիշը.
 - ե) անուղղակի ջերմային հզորությունը կՎտ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ տասնորդական նիշը.
 - զ) էներգաարդյունավետության ինդեքսը՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը եւ հաշվարկված VIII հավելվածին համապատասխան.
 - է) օգտակար էներգաարդյունավետությունն անվանական ջերմային հզորության եւ եթե անհրաժեշտ է, նվազագույն բեռնվածության դեպքում՝ կլորացված մինչեւ ամենամոտ տասնորդական նիշը եւ հաշվարկված VIII հավելվածին համապատասխան.
 - ը) ցանկացած հատուկ նախազգուշական միջոց, որ պետք է ձեռնարկել սենքի տեղային տաքացուցչի հավաքման, տեղադրման կամ այն սարքին վիճակում պահելու ժամանակ:

2. Մեկ տեղեկաթերթիկում կարող է ներառվել նույն մատակարարի կողմից մատակարարված՝ սենքի տեղային տաքացուցիչների մի շարք մոդելների վերաբերյալ տեղեկություններ:
 3. Տեղեկաթերթիկում պարունակվող տեղեկությունները կարող են ներկայացվել պիտակի պատճենի տեսքով՝ գունավոր կամ սեւ ու սպիտակ: Այդ դեպքում 1-ին կետում նշված տեղեկությունները, որոնք դեռ ցուցադրված չեն պիտակի վրա, նույնպես տրամադրվում են:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ V***Տեխնիկական փաստաթղթերը**

Սենքի տեղային տաքացուցիչների դեպքում 3(1)(ե) հոդվածում եւ 3(2)(ե) հոդվածում նշված տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն՝

- ա) մատակարարի անվանումը եւ հասցեն.
- բ) մոդելի նույնականացուցիչը.
- գ) կիրառելիության դեպքում՝ հղումներ կիրառված ներդաշնակեցված ստանդարտներին.
- դ) այնտեղ, որտեղ 2-րդ աղյուսակի համաձայն որպես նախընտրելի վառելիք է ծառայում այլ փայտային կենսազանգված, ոչ փայտային կենսազանգված, այլ հանածո վառելիք կամ կենսազանգվածի եւ հանածո վառելիքի այլ խառնուրդ՝ վառելիքի նկարագրությունը, որը բավարար է վառելիքի միանշանակ նույնականացման համար, ինչպես նաեւ վառելիքի տեխնիկական ստանդարտը կամ մասնագիրը, որը ներառում է չափված խոնավության պարունակությունը եւ չափված մոխրի պարունակությունը, իսկ այլ հանածո վառելիքի դեպքում՝ նաեւ վառելիքի չափված ցնդող նյութի պարունակությունը.
- ե) անհրաժեշտության դեպքում՝ օգտագործված այլ տեխնիկական ստանդարտներ եւ մասնագրեր.
- զ) մատակարարի համար պարտավորություններ սահմանելու լիազորություն ունեցող անձի նույնականացումը եւ ստորագրությունը.
- է) 2-րդ աղյուսակում (պինդ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում) եւ 3-րդ աղյուսակում (գազային (հեղուկ) վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում) ներառված տեղեկությունները՝ VIII հավելվածին համապատասխան չափված եւ հաշվարկված.

- ը) մատակարարների կողմից կամ նրանց անունից անցկացված փորձարկումների վերաբերյալ հաշվետվություններ, այդ թվում՝ փորձարկումներն անցկացրած մարմնի անվանումն ու հասցեն.
- թ) ցանկացած հատուկ նախազգուշական միջոց, որ պետք է ձեռնարկել սենքի տեղային տաքացուցչի հավաքման, տեղադրման կամ այն սարքին վիճակում պահելու ժամանակ.
- ժ) նույնատիպ մոդելների ցանկը՝ անհրաժեշտության դեպքում:

Այս տեղեկությունները կարելի է համակցել Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգի համաձայն սահմանված միջոցներին համապատասխան ներկայացված տեխնիկական փաստաթղթերի հետ¹:

Աղյուսակ 2

Պինդ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների տեխնիկական պարամետրերը

Մոդելի նույնականացուցիչ (ներ)		
Անուղղակի ջեռուցման գործառույթ՝ [այր/ոչ]		
Ուղղակի ջերմային հզորություն՝ ... (կՎտ)		
Անուղղակի ջերմային հզորություն՝ . (կՎտ)		
Վառելիք	Նախընտրելի վառելիք (միայն մեկը) ¹	Այլ համապատասխան վառելիք՝
Գերաններ < 25 % խոնավության պարունակությամբ	[այր/ոչ]	[այր/ոչ]
Սեղմված փայտ < 12 % խոնավության պարունակությամբ	[այր/ոչ]	[այր/ոչ]
Փայտային այլ կենսազանգված	[այր/ոչ]	[այր/ոչ]
Ոչ փայտային կենսազանգված	[այր/ոչ]	[այր/ոչ]
Անտրացիտ եւ չոր էներգետիկ ածուխ	[այր/ոչ]	[այր/ոչ]

¹«Էներգասպառող եւ էներգախնայող արտադրատեսակների էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ մշակելու համար շրջանակ սահմանելու մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի 2009/125/ԵՀ հրահանգ (ՊՏ L 285, 31.10.2009թ., էջ 10):

Պինդ կոքս	[այր/ոչ]	[այր/ոչ]
Կիսակոքս	[այր/ոչ]	[այր/ոչ]
Բիտումային ածուխ	[այր/ոչ]	[այր/ոչ]
Լիգնիտի բրիկետներ	[այր/ոչ]	[այր/ոչ]
Տորֆի բրիկետներ	[այր/ոչ]	[այր/ոչ]
Հանածո վառելիքի խառնուրդների բրիկետներ	[այր/ոչ]	[այր/ոչ]
Այլ հանածո վառելիք	[այր/ոչ]	[այր/ոչ]
Կենսազանգվածի եւ հանածո վառելիքի բրիկետների խառնուրդ	[այր/ոչ]	[այր/ոչ]
Կենսազանգվածի եւ պինդ վառելիքի այլ խառնուրդ	[այր/ոչ]	[այր/ոչ]

Բնութագրերը նախընտրելի վառելիքով աշխատելիս

Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետություն η_v [%]՝

էներգաարդյունավետության ինդեքս (ԷԱԻ)՝

Միավոր	Պայման անշան	Արժեք	Միավոր	Անվանում	Պայման անշան	Արժեք	Միավոր
Ջերմային հզորություն				Օգտակար էներգաարդյունավետություն (ստացված ՍՋԱ)			
Անվանական ջերմային հզորություն	$P_{անվ}$	x,x	կՎտ	Օգտակար էներգաարդյունավետությունն անվանական ջերմային հզորության դեպքում	$\eta_{th,անվ}$	x,x	%
Նվազագույն ջերմային հզորություն (կողմնորոշիչ)	$P_{նվազ}$	[x,x/առկա է]	կՎտ	Օգտակար արդյունավետությունը նվազագույն ջերմային հզորության դեպքում (կողմնորոշիչ)	$\eta_{th,նվազ}$	[x,x/առկա է]	%

Լրացուցիչ էներգասպառում

Ջերմային հզորության (սենյակային ջերմաստիճանի կարգավորման) տեսակ (ընտրել տարբերակներից որեւէ մեկը)

Անվանական ջերմային հզորության դեպքում	$\xi_{խառվ}$	x,xxx	կՎտ	միաֆազ ջերմային հզորություն, սենյակային ջերմաստիճանի կարգավորում	[այր/ոչ]	
Նվազագույն ջերմային	$\xi_{նվազ}$	x,xxx	կՎտ	ծեռքով կարգավորվող երկու կամ ավելի ֆազեր՝ առանց	[այր/ոչ]	

հզորության դեպքում				սենյակային ջերմաստիճանի կարգավորման հնարավորության					
Սպասման ռեժիմում	էլտ	x,xxx	կՎտ	մեխանիկական ջերմապահպանիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի կարգավորման մեխանիզմով	[այո/ոչ]				
<p>Մշտական բռնկման բոցի հզորության պահանջմունք</p> <p>Բռնկման բոցի հզորության պահանջմունք (եթե կիրառելի է)</p> <p>Կոնտակտային տվյալներ</p>				սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով	[այո/ոչ]				
				ավտոմատ միացման օրական ժամակարգավորիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով	[այո/ոչ]				
				ավտոմատ միացման շաբաթական ժամակարգավորիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով	[այո/ոչ]				
				<p>Կարգավորման այլ հնարավորություններ (հնարավոր է բազմակի ընտրություն)</p>					
				ներկայության դետեկտորով սենյակային ջերմաստիճանի կարգավորում	[այո/ոչ]				
				բաց պատուհանի դետեկտորով սենյակային ջերմաստիճանի կարգավորում	[այո/ոչ]				
				հեռակառավարման հնարավորությամբ	[այո/ոչ]				
	$P_{բռնկ. բոց}$	[x,xxx/առկ ա չէ]	կՎտ						
	Մատակարարի անվանումն ու հասցեն								

Աղյուսակ 3

Գազային (հեղուկ) վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների տեխնիկական պարամետրերը

Մոդելի նույնականացուցիչ (ներ)								
Անուղղակի ջեռուցման գործառույթ՝ [այո/ոչ]								
Ուղղակի ջերմային հզորություն՝ ... (կՎտ)								
Անուղղակի ջերմային հզորություն՝ ... (կՎտ)								
Վառելիք								
Ընտրեք վառելիքի տեսակը			[գազային (հեղուկ)]		[նշել]			
Միավոր	Պայման անշան	Արժեք	Միավոր		Միավոր	Պայման անշան	Արժեք	Միավոր
Ջերմային հզորություն				Օգտակար էներգաարդյունավետություն (ՍՋԱ)				
Անվանական ջերմային հզորություն	$P_{անվ.}$	x,x	կՎտ	Օգտակար էներգաարդյունավետությունն անվանական ջերմային հզորության դեպքում		$\eta_{th,անվ.}$	x,x	%
Նվազագույն ջերմային հզորություն (կողմնորոշիչ)	$P_{նվազ.}$	[x,x/առկա չէ]	կՎտ	Օգտակար էներգաարդյունավետությունը նվազագույն ջերմային հզորության դեպքում (կողմնորոշիչ)		$\eta_{th,նվազ.}$	[x,x/առկա չէ]	%
Լրացուցիչ էներգասպառում				Ջերմային հզորության (սենյակային ջերմաստիճանի կարգավորման) տեսակ (ընտրել տարբերակներից որեւէ մեկը)				
Անվանական ջերմային հզորության դեպքում	$E_{լատավ.}$	x,xxx	կՎտ	միաֆազ ջերմային հզորություն՝ առանց սենյակային ջերմաստիճանի կարգավորման հնարավորության		[այո/ոչ]		
Նվազագույն ջերմային հզորության դեպքում	$E_{նվազ.}$	x,xxx	կՎտ	ծեռքով կարգավորվող երկու կամ ավելի ֆազեր՝ առանց սենյակային ջերմաստիճանի կարգավորման հնարավորության		[այո/ոչ]		
Սպասման ռեժիմում	$E_{լտ}$	x,xxx	կՎտ	մեխանիկական ջերմապահպանիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի կարգավորման մեխանիզմով		[այո/ոչ]		
				սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով		[այո/ոչ]		

				ավտոմատ միացման օրական ժամակարգավորիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով	[այո/ոչ]	
				ավտոմատ միացման շաբաթական ժամակարգավորիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով	[այո/ոչ]	
Կարգավորման այլ հնարավորություններ՝ այլ (հնարավոր է բազմակի ընտրություն)						
				ներկայության դետեկտորով սենյակային ջերմաստիճանի կարգավորում	[այո/ոչ]	
				բաց պատուհանի դետեկտորով սենյակային ջերմաստիճանի կարգավորում	[այո/ոչ]	
Մշտական բռնկման բոցի հզորության պահանջմունք				հեռակառավարման հնարավորությամբ	[այո/ոչ]	
Բռնկման բոցի հզորության պահանջմունք (եթե կիրառելի է)	$P_{բռնկ,բոց}$	[x,xxx/առկ ա չէ]	կՎտ			
Կոնտակտային տվյալներ	Մատակարարի անվանումն ու հասցեն					

*ՀԱՎԵԼՎԱԾ VI***Տրամադրվելիք տեղեկություններն այն դեպքերում, երբ վերջնական սպառողները ցուցադրված արտադրանքը կարող են տեսնել միայն համացանցում**

1. 4(1)(բ) հոդվածում նշված տեղեկությունները ներկայացվում են հետևյալ հաջորդականությամբ՝
 - ա) մոդելի էներգաարդյունավետության դասը, որը որոշվում է II հավելվածի 1-ին կետին համապատասխան.
 - բ) ուղղակի ջերմային հզորությունը կՎտ-ով՝ կլորացված մինչև ամենամոտ տասնորդական նիշը.
 - գ) անուղղակի ջերմային հզորությունը կՎտ-ով՝ կլորացված մինչև ամենամոտ տասնորդական նիշը.
 2. Առաջին կետում նշված տեղեկությունները տպագրվում կամ ցուցադրվում են ընթեռնելի տառատեսակով եւ տառաչափով:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ VII***Համացանցի միջոցով վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի
դեպքում տրամադրվելիք տեղեկությունները**

1. Սույն հավելվածի 2-5-րդ կետերի նպատակներից ելնելով՝ կիրառվում են հետևյալ սահմանումները.
 - ա) «դիսփիլեյի մեխանիզմ» նշանակում է ցանկացած էկրան, ներառյալ՝ սենսորային էկրան կամ այլ վիզուալ տեխնոլոգիաներ, որոնք օգտագործվում են ինտերնետային բովանդակությունն օգտագործողներին ցուցադրելու համար.
 - բ) «ներկառուցված դիսփիլեյ» նշանակում է վիզուալ ինտերֆեյս, որում պատկերը կամ տվյալների հավաքածուն հասանելի է դառնում մկնիկի կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրայով անցկացնելով կամ մեկ այլ պատկերի կամ տվյալների հավաքածուի՝ սենսորային էկրանի ընդլայնմամբ.
 - գ) «սենսորային էկրան» նշանակում է հպմանն արձագանքող էկրան, ինչպես օրինակ՝ պլանշետային համակարգչինը, սալակարգչինը կամ սմարթֆոնինը.
 - դ) «այլընտրանքային տեքստ» նշանակում է տեքստ, որը տրամադրվում է որպես այն գրաֆիկի այլընտրանք, որը թույլ է տալիս ներկայացնել տեղեկությունները ոչ գրաֆիկական ձևով, որում ցուցասարքերը չեն կարող վերարտադրել գրաֆիկները, կամ որպես հասանելիությանը նպաստող միջոց, ինչպես օրինակ՝ ձայնի սինթեզի հավելվածների մուտքային տվյալները:
2. 3(1)(բ) հոդվածի կամ 3(2)(բ) հոդվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված համապատասխան պիտակը ցուցադրվում է դիսփիլեյի

մեխանիզմի վրա՝ արտադրանքի գնի կողքին: Պիտակի չափը պետք է այնպիսին լինի, որ հստակ տեսանելի եւ ընթեռնելի լինի եւ համապատասխանի III հավելվածի 2-րդ կետում նշված չափին: Պիտակը կարող է ցուցադրվել ներկառուցված դիսփլեյի միջոցով, որի դեպքում պիտակին հասանելիություն ունենալու համար օգտագործվող պատկերը պետք է համապատասխանի սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված մասնագրերին: Ներկառուցված դիսփլեյի կիրառման դեպքում պիտակը հայտնվում է մկնիկի առաջին կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրայով անցկացնելով կամ պատկերի վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ:

3. Պիտակին հասանելիություն ունենալու համար օգտագործվող պատկերը ներկառուցված դիսփլեյի դեպքում՝

ա) պիտակի վրա առկա արտադրանքի էներգաարդյունավետության դասին համապատասխանող գույնով սլաք է.

բ) սլաքի վրա նշվում է արտադրանքի էներգաարդյունավետության դասը սպիտակ գույնով, գնի տառաչափին համարժեք տառաչափով, եւ

գ) ունի հետեւյալ երկու ձեւաչափերից մեկը՝



4. Ներկառուցված դիսփլեյի դեպքում պիտակի ցուցադրման հաջորդականությունը հետեւյալն է՝

ա) սույն հավելվածի 3-րդ կետում նշված պատկերը ցուցադրվում է դիսփլեյի մեխանիզմի վրա՝ արտադրանքի գնի կողքին.

բ) պատկերը հղում է պարունակում պիտակին.

գ) պիտակը ցուցադրվում է մկնիկի կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրայով անցկացնելով կամ պատկերի վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ.

- դ) պիտակը ցուցադրվում է ելնող պատուհանով, նոր ներդիրով, նոր էջով կամ էկրանի ներդրված դիսփլեյով.
 - ե) սենսորային էկրաններին պիտակի խոշորացման համար կիրառվում են սենսորային խոշորացման համար սարքվածքների պայմանական նշանները.
 - զ) պիտակի ցուցադրությունն ավարտվում է «փակել» ընտրանքի կոճակի միջոցով կամ փակելու այլ ստանդարտ մեխանիզմով.
 - է) գրաֆիկի համար այլընտրանքային տեքստը, որը պետք է ցուցադրվի պիտակի ցուցադրության ծախսողման դեպքում, վերաբերում է արտադրանքի էներգաարդյունավետության դասին՝ գնի տառաչափին համարժեք տառաչափով:
5. 3(1)(դ) հոդվածի կամ 3(2)(դ) հոդվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված՝ արտադրանքի համապատասխան տեղեկաթերթիկը ցուցադրվում է դիսփլեյի մեխանիզմի վրա՝ արտադրանքի գնի կողքին: Չափը պետք է այնպիսին լինի, որ արտադրանքի տեղեկաթերթիկը հստակ տեսանելի եւ ընթեռնելի լինի: Պիտակը կարող է ցուցադրվել ներկառուցված դիսփլեյի միջոցով, որի դեպքում տեղեկաթերթիկին հասանելիություն ունենալու համար օգտագործվող հղման վրա հստակ եւ ընթեռնելի կերպով նշվում է «Արտադրանքի տեղեկաթերթիկ»: Ներկառուցված դիսփլեյի օգտագործման դեպքում արտադրանքի տեղեկաթերթիկը հայտնվում է մկնիկի առաջին կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրայով անցկացնելով կամ հղման վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ:
-

ՀԱՎԵԼՎԱԾ VIII

Չափումները եւ հաշվարկները

1. Սույն կանոնակարգի պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու եւ ստուգելու նպատակներով իրականացվում են չափումներ եւ հաշվարկներ՝ օգտագործելով ներդաշնակեցված ստանդարտներ, որոնց հղումային համարները այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում*, կամ այլ հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի մեթոդներ, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդների վրա: Դրանք պետք է բավարարեն 2-4-րդ կետերով սահմանված պահանջները:
2. Չափումների եւ հաշվարկների ընդհանուր պայմաններ
 - ա) Սենքի տեղային տաքացուցիչները փորձարկվում են նախընտրելի վառելիքի մասով՝ էներգաարդյունավետության ինդեքսը, ուղղակի եւ անուղղակի ջերմային հզորությունը որոշելու նպատակով:
 - բ) Ուղղակի եւ անուղղակի ջերմային հզորության հայտարարված արժեքը եւ էներգաարդյունավետության ինդեքսը կլորացվում են մինչեւ ամենամոտ տասնորդական նիշը:
3. Էներգաարդյունավետության ինդեքսի եւ սենքի տեղային տաքացուցիչների էներգասպառման ընդհանուր պայմանները՝
 - ա) անհրաժեշտության դեպքում չափվում են օգտակար էներգաարդյունավետության $\eta_{th,անվ.}$, $\eta_{th,նվագ.}$ արժեքները եւ ուղղակի ու անուղղակի ջերմային հզորության արժեքները $P_{անվ.}$, $P_{նվագ.}$ -ի համար:
 - բ) Էներգաարդյունավետության ինդեքսը (EUE) հաշվարկվում է որպես ակտիվ ռեժիմում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության գործակից ($\eta_{U,ակտիվ}$)՝ ճշգրտված

Կենսազանգվածը որպես նախընտրելի վառելիք օգտագործող՝ սենքի տեղային տաքացուցիչների համար մի գործակցով, որում հաշվի է առնվում նախընտրելի վառելիքի վերականգնվող բնույթը, եւ ճշգրտված ներդրումներով, որոնք պայմանավորում են ջերմաստիճանի կարգավորումները, լրացուցիչ էներգասպառումը եւ մշտական բռնկման բոցի էներգասպառումը: Էներգաարդյունավետության ինդեքսը (ԷԱԻ) արտահայտվում է որպես թիվ, որը համարժեք է իր՝ տոկոսներով արտահայտված թվին:

4. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության համար հատուկ պայմանները

ա) Բոլոր սենքի տեղային տաքացուցիչների էներգաարդյունավետության ինդեքսը (ԷԱԻ) սահմանվում է որպես՝

$$ԷԱԻ = (\eta_{U,ակտիվ} \cdot ԿՊԳ) - 10 \% + Գ(2) + Գ(3) - Գ(4) - Գ(5)$$

որտեղ՝

- $\eta_{U,ակտիվ}$ -ը ակտիվ ռեժիմում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության գործակիցն է՝ արտահայտված %-ով, հաշվարկված 4(բ) հոդվածով սահմանված կարգին համապատասխան,
- ԿՊԳ-ն կենսազանգվածի պիտակի գործակիցն է, որը 1.45 է կենսազանգվածով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների համար եւ 1՝ հանաժո վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների համար,
- Գ(2)-ը տոկոսներով արտահայտված այն ճշգրտման գործակիցն է, որը պայմանավորում է սենյակի ջերմային հարմարավետության կարգավորման մեխանիզմների ճշգրտված ներդրումների

արդյունքում էներգաարդյունավետության ինդեքսում դրական ներդրումը, որի արժեքները անհամատեղելի են եւ չեն կարող գումարվել իրար,

— Գ(3)-ը տոկոսներով արտահայտված այն ճշգրտման գործակիցն է, որը պայմանավորում է սենյակի ջերմային հարմարավետության կարգավորման մեխանիզմների ճշգրտված ներդրումների արդյունքում էներգաարդյունավետության ինդեքսում դրական ներդրումը, որի արժեքները կարող են գումարվել իրար,

— Գ(4)-ը տոկոսներով արտահայտված այն ճշգրտման գործակիցն է, որով պայմանավորվում է լրացուցիչ էներգասպառման դեպքում էներգաարդյունավետության ինդեքսում բացասական ներդրումը,

— Գ(5)-ը տոկոսներով արտահայտված այն ճշգրտման գործակիցն է, որով պայմանավորվում է մշտական բռնկման բոցի էներգասպառման դեպքում էներգաարդյունավետության ինդեքսում բացասական ներդրումը:

բ) ակտիվ ռեժիմում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության գործակիցը հաշվարկվում է որպես՝

$$\eta_{U,ակտիվ}=\eta_{th,անվ.}$$

որտեղ՝

— $\eta_{th,անվ.}$ -ը օգտակար էներգաարդյունավետությունն է անվանական ջերմային հզորության դեպքում՝ հիմնված ՍՋԱ-ի վրա:

գ) Գ(2) ճշգրտման գործակիցը, որը պայմանավորում է սենյակի ջերմային հարմարավետության կարգավորման մեխանիզմների ճշգրտված ներդրումների արդյունքում էներգաարդյունավետության ինդեքսում դրական ներդրումը, որի արժեքները անհամատեղելի են կամ չեն կարող գումարվել իրար, հաշվարկվում է հետեւյալ եղանակով՝

Բոլոր սենքի տեղային տաքացուցիչների համար ճշգրտման Գ(2) գործակիցը հավասար է 4-րդ աղյուսակով սահմանված գործակիցներից մեկին, որից կախված կիրառվում է կարգավորման բնութագիրը: Կարող է ընտրվել միայն մեկ արժեք:

Աղյուսակ 4

Գ (2) ճշգրտման գործակից

Եթե արտադրանքը սարքավորված է հետտեյալ սարքերով (կարող է կիրառվել միայն մեկ տարբերակ)	Գ(2)
	ա) Վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում ¹
միաֆազ ջերմային հզորություն՝ առանց սենյակային ջերմաստիճանի կարգավորման հնարավորության	0.0 %
ձեռքով կարգավորվող երկու կամ ավելի ֆազեր՝ առանց սենյակային ջերմաստիճանի կարգավորման հնարավորության	1.0 %
մեխանիկական ջերմապահպանիչով սենյակային ջերմաստիճանի կարգավորման մեխանիզմ	2.0 %
սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմ	4.0 %
ավտոմատ միացման օրական ժամակարգավորիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով	6.0 %
ավտոմատ միացման շաբաթական ժամակարգավորիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով	7.0 %

2022 թվականի հունվարի 1-ից Գ(2)-ը կկազմի զրո պինդ վառելիքով աշխատող սենքի տեղային այն տաքացուցիչների համար, որոնցից ջերմակարգավորիչը նվազագույն ջերմային հզորության վրա դրված լինելու դեպքում անջատվում են Հանձնաժողովի 2015/1185 կանոնակարգի (ԵՄ)¹ II հավելվածի 2-րդ կետով

¹ «Էներգասպառող եւ էներգախնայող արտադրանքի էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ մշակելու համար շրջանակ սահմանելու մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի 2009/125/ԵՀ հրահանգ (տե՛ս պաշտոնական տեղեկագրի 1-ին էջը):

սահմանվածից ավելի մեծ ծավալով արտանետումներ: Այս կարգավորումների պայմաններում ջերմային հզորությունը չպետք է անվանական ջերմային հզորության 50%-ից ավելի կազմի: 2022 թվականի հունվարի 1-ից, եթե Գ(2)-ը գրո չէ, տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն նվազագույն ջերմային հզորության դեպքում անջատվող արտանետումների մասին համապատասխան տեղեկություններ:

- դ) Գ(3) ճշգրտման գործակիցը, որը պայմանավորում է սենյակի ջերմային հարմարավետության կարգավորման մեխանիզմների ճշգրտված ներդրումների արդյունքում էներգաարդյունավետության ինդեքսում դրական ներդրումը, որի արժեքները կարող են գումարվել իրար, հաշվարկվում է հետևյալ եղանակով՝

Բոլոր սենքի տեղային տաքացուցիչների համար ճշգրտման Գ(3) գործակիցը 5-րդ աղյուսակով սահմանված արժեքների հանրագումարն է, որից կախված կիրառվում է (են) կարգավորման բնութագիրը (երը):

Աղյուսակ 5

Գ(3) ճշգրտման գործոն

Եթե արտադրանքը սարքավորված է հետևյալ սարքերով (կարող են կիրառվել մի քանի տարբերակներ)՝	Գ(3)
	Վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում՝
ներկայության դետեկտորով սենյակային ջերմաստիճանի կարգավորում	1.0 %
բաց պատուհանի դետեկտորով սենյակային ջերմաստիճանի կարգավորում	1.0 %
հեռակառավարման հնարավորությամբ	1.0 %

2022 թվականի հունվարի 1-ից Գ(3)-ը կկազմի զրո պինդ վառելիքով աշխատող այն սենքի տեղային տաքացուցիչների համար, որոնցից ջերմակարգավորիչը նվազագույն ջերմային հզորության վրա դրված լինելու դեպքում անջատվում են Հանձնաժողովի 2015/1185 կանոնակարգի (ԵՄ) II հավելվածի 2-րդ կետով սահմանվածից ավելի մեծ ծավալով արտանետումներ: Այս կարգավորումների պայմաններում ջերմային հզորությունը չպետք է անվանական ջերմային հզորության 50%-ից ավելի կազմի: 2022 թվականի հունվարի 1-ից, եթե Գ(3)-ը զրո չէ, տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն նվազագույն ջերմային հզորության դեպքում անջատվող արտանետումների մասին համապատասխան տեղեկություններ:

ե) լրացուցիչ էներգասպառման օգտագործման Գ(4) գործակիցը հաշվարկվում է հետևյալ եղանակով՝

Ճշգրտման այս գործակիցը հիմնվում է «միացված» եւ «սպասման» ռեժիմներում օժանդակ էլեկտրասպառման վրա:

Բոլոր սենքի տեղային տաքացուցիչների համար օժանդակ էլեկտրասպառման ճշգրտումը հաշվարկվում է հետևյալ եղանակով՝

$$G(4) = CC \cdot \frac{0,2 \cdot E_{\text{առաւ.}} + 0,8 \cdot E_{\text{նվազ.}} + 1,3 \cdot E_{\text{ԱՄՌ.}}}{P_{\text{անվ.}}} \cdot 100[\%]$$

որտեղ՝

- $E_{\text{առաւ.}}$ -ն էլեկտրաէներգիայի սպառումն է անվանական ջերմային հզորության դեպքում՝ արտահայտված ԿՎտ-ով.
- $E_{\text{նվազ.}}$ -ն էլեկտրաէներգիայի սպառումն է նվազագույն ջերմային հզորության դեպքում՝ արտահայտված ԿՎտ-ով: Այն դեպքում, երբ արտադրանքը չի առաջարկում նվազագույն ջերմային հզորություն, օգտագործվում է անվանական ջերմային հզորության դեպքում էլեկտրաէներգիայի սպառման արժեքը.

- էլտ-ն «սպասման» ռեժիմում արտադրանքի էլեկտրաէներգիայի սպառումն է՝ արտահայտված կՎտ-ով,
- $P_{անվ.ն}$ արտադրանքի անվանական ջերմային հզորությունն է՝ արտահայտված կՎտ-ով:

գ) Մշտական բռնկման բոցի էներգասպառման հետ կապված ճշգրտման $Գ(5)$ գործակիցը հաշվարկվում է հետևյալ եղանակով՝

Այս ճշգրտման գործակիցը հիմնվում է մշտական բռնկման բոցի հզորության պահանջմունքի վրա:

Բոլոր սենքի տեղային տաքացուցիչների համար ճշգրտման գործակիցը հաշվարկվում է հետևյալ եղանակով՝

$$Գ(5) = 0,5 \cdot \frac{P_{բռնկ.բոց}}{P_{անվ.}} \cdot 100[\%]$$

որտեղ՝

- $P_{բռնկ.բոց}$ բռնկման բոցի սպառումն է՝ արտահայտված կՎտ-ով,
- $P_{անվ.ն}$ արտադրանքի անվանական ջերմային հզորությունն է՝ արտահայտված կՎտ-ով:

*ՀԱՎԵԼՎԱԾ IX***Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման
ընթացակարգը**

3-րդ և 4-րդ հոդվածներով սահմանված պահանջներին արտադրանքի համապատասխանությունը գնահատելու նպատակներով անդամ պետությունների մարմինները կիրառում են փորձարկման հետևյալ ընթացակարգը՝

1. Անդամ պետության լիազորված մարմիններն անցկացնում են յուրաքանչյուր մոդելի համար մեկ միավոր արտադրատեսակի փորձարկում: Միավոր արտադրատեսակը փորձարկման ժամանակ պետք է ունենա վառելիքի բնութագրերի նույն սանդղակը, ինչ այն վառելիքը, որը արտադրողի կողմից օգտագործվել է VIII հավելվածին համապատասխան չափումներ իրականացնելու ժամանակ:

Մոդելը համարվում է կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե՝

- ա) պիտակի եւ արտադրանքի տեղեկաթերթիկի վրա նշված արժեքներն ու դասերը համապատասխանում են տեխնիկական փաստաթղթերում պարունակվող արժեքներին, եւ
- բ) պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների համար էներգաարդյունավետության ինդեքսը (ԷԱԻ) հայտարարված արժեքի 8%-ից ավելի ցածր չէ.
- գ) հեղուկ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների համար ԷԱԻ-ն հայտարարված արժեքի 8%-ից ավելի ցածր չէ.
- դ) գազային վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների համար ԷԱԻ-ն հայտարարված արժեքի 8%-ից ավելի ցածր չէ:

2. Եթե 2-րդ կետի «ա» ենթակետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա մոդելը եւ բոլոր համարժեք մոդելները համարվում են սույն կանոնակարգին չհամապատասխանող: Եթե 2-րդ կետի «բ»-«դ» ենթակետերում նշված արդյունքներից որեւէ մեկը չի ապահովվում, ապա անդամ պետությունների մարմինները փորձարկման համար պատահականության սկզբունքով ընտրում են նույն մոդելի երեք լրացուցիչ միավոր: Որպես այլընտրանք՝ ընտրված երեք լրացուցիչ միավորները կարող են ընտրվել մեկ կամ ավելի համարժեք մոդելներից, որոնք մատակարարի տեխնիկական փաստաթղթերում թվարկվել են որպես համարժեք արտադրանք:

Մոդելը համարվում է կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե՝

- ա) արտադրանքի երեք լրացուցիչ միավորների համար պիտակի եւ արտադրանքի տեղեկաթերթիկի վրա նշված՝ հայտարարված արժեքներն ու դասերը համապատասխանում են տեխնիկական փաստաթղթերում պարունակվող արժեքներին,
- բ) պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների համար արտադրանքի երեք լրացուցիչ միավորների միջին ԷԱԻ-ին հայտարարված արժեքի 8%-ից ավելի ցածր չէ.
- գ) հեղուկ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների համար արտադրանքի երեք լրացուցիչ միավորների միջին ԷԱԻ-ին հայտարարված արժեքի 8%-ից ավելի ցածր չէ.
- դ) գազային վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների համար արտադրանքի երեք լրացուցիչ միավորների միջին ԷԱԻ-ին հայտարարված արժեքի 8%-ից ավելի ցածր չէ:

Եթե 2-րդ կետում նշված արդյունքները չեն ապահովվում, ապա մոդելը եւ բոլոր համարժեք մոդելները համարվում են սույն կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող:

Անդամ պետությունների մարմինները տրամադրում են փորձարկման արդյունքները եւ այլ համապատասխան տեղեկություններ այլ անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին մոդելի անհամապատասխանության վերաբերյալ որոշումը կայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

Անդամ պետությունների լիազորված մարմիններն օգտագործում են VIII հավելվածով սահմանված՝ չափման եւ հաշվարկման մեթոդները:

Սույն հավելվածով սահմանված՝ փորձարկման առավելագույն թույլատրելի շեղումները վերաբերում են միայն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից իրականացվող՝ չափված պարամետրերի ստուգմանը եւ որպես թույլատրելի շեղում չեն օգտագործվում մատակարարի կողմից տեխնիկական փաստաթղթերում արժեքներ սահմանելու նպատակով: Պիտակի վրա կամ արտադրանքի տեղեկաթերթիկում նշված արժեքները եւ դասերն ավելի բարենպաստ չեն մատակարարի համար, քան տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքները:
